ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 5625-Ա « 18 » նոյեմբերի 2026թ.

ԵՐԵՎԱՆԻ ԱՆՎԱՆՈՒՄՆ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով «ԶԵԹ ԸՆԴ ԷՅ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Նելլի Մաժինյանի կողմից լիազորված անձ Արտակ Խուլյանի դիմումը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով և Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 458-Ն որոշման հավելվածի 17-րդ կետով.

1.«ԶԵԹ ԸՆԴ ԷՅ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը 2026 թվականի (ընթացիկ տարվա) համար թույլատրել «ԶԵԹ ԸՆԴ ԷՅ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ապրանքների արտադրության մեջ օգտագործել Երևանի զինանշանը:

2.Ընդունել ի գիտություն, որ Երևանի զինանշանն ապրանքների արտադրության մեջ օգտագործելու թույլտվության համար ընթացիկ տարվա տեղական տուրքը վճարված է:

3.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի, ծառայությունների և գովազդի վարչության պետի վրա:

4.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանը:

5.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

